# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լուսապսակ Խմբագրություն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/45 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Ուրախ պարտեզ | Սույն ամսագիրը նախատեսվում է նախադպրոցական ոլորտի մանկավարժական աշխատողների և ծնողների համար: Բովանդակային չափանիշներ. ելնելով երեխաների տարիքային առանձնահատկությունից ամսագիրը պետք ներառի՝ • լեզվական և հաղորդակցական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ճանաչողական և մոտիվացիոն կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • թվային և մեդիա կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • մշակութային կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • մաթեմատիկական և տեխնիկական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • տնտեսական կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր, • ֆիզիկական կուլտուրայի կարողունակության զարգացմանն ուղղված նյութեր: Ամսագիրը նպաստում է. ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 10-14-րդ կետերով սահմանված վերջնարդյունքների ապահովմանը: Կառուցվածքային չափանիշներ. • ամսագրի յուրաքանչյուր համարում էջերը պետք է բաժանված լինեն 4 առանձին խորագրերի, • ընդգրկված նյութերի շարադրանքը և |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ներկայացման ձևը պետք է համապատասխանի այն տարիքային խմբի սովորողների ընկալումներին, ում համար նախատեսված է տվյալ ամսագիրը, • ամսագրերում զետեղված նյութերը, որպես կանոն, չպետք է կրկնեն նախադպրոցական կրթական ծրագրում և ուսումնական նյութերում ընդգրկված նյութերի բովանդակությունը, այն պետք է լրացնի նախատեսված բովանդակությունը՝ մեկնաբանված այլ մեթոդաբանությամբ, • ամսագրերը պետք է ունենան կրթական գործընթացին, երեխաների ստեղծագործական մտքին, նախասիրություններին ինչպես նաև սոցիալ-բարոյական ուղղվածությանը աջակցող բաղադրիչ, • ամսագրերը պետք է նպաստեն երեխաների՝ միմյանց հետ հաղորդակցվելուն, • ծնողները ևս կարող են հանդես գալ, որպես հոդվածագիրներ: Տեխնիկական չափանիշներ. • մամուլը՝ 2 տ/մ, • չափսը՝ 60/80, 1/8, • կազմը՝ կավճապատ, գունավոր (չորս և ավելի), 115 գր., • թուղթը՝ ոչ կավճապատ, • տպագրությունը՝ գունավոր (չորս և ավելի), 70գր. • պարբերականը՝ ընդհանուր 2 համար, որից յուրաքանչյուրը՝ 640 տպաքանակով, • նախատեսված ամսագրերի տպագրական որակը պետք է համապատասխանի՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 71-Ն որոշման Հավելված N 2-ի 3-րդ կետով ամրագրված և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 2 «Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու մասին» կարգով գործողության մեջ դրված «Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 797 որոշմամբ ընդունված «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ»-ի պահանջներին, • ամսագրերը պետք է ունենան անվանում, • ելքային տեղեկություններ՝ տպագրվող ամսագրերի հրատարակչական որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում գործող «ГОСТ 4.482-87 «Издания книжные и журналные». Издательско-полиграфическое оформление и полиграфическое исполнение» պետական ստանդարտներին, • հատուկ նշագրում՝ ամսագրերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը, • ամսագրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված և հայերեն լեզվով, • ամսագրում ընդգրկված նյութերի 70 % պետք է լինեն հեղինակային, • ամսագրում ընդգրկված նյութերում առկա տեղեկություններն ու փաստերը պետք է լինեն հավաստի, ստուգելի և ունենան աղբյուրների հղումներ, • ամսագրերը |

| | | |
|---|---|---|
| | | ավելի ժամանակակից պետք է լինեն և՛ բովանդակության, և՛ ձևավորման տեսանկյունից, հետևաբար խմբագրակազմում՝ ըստ կրթական աստիճանի, մանկավարժ-մեթոդիստի և կրթության ոլորտում մասնագիտացված նկարիչի ներգրավվածությունը պարտադիր է, • պատրաստի նյութը տպագրության հանձնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ անհրաժեշտ է փաթեթի նմուշ-օրինակը տրամադրել պատվիրատուին՝ առկա նյութերի բովանդակության հաստատման նպատակով: Ամսագրերի նյութերը պետք է լինեն առանց ուղղագրական, ոճական, իմաստային և նմանատիպ սխալների: * Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է մատակարարի կողմից՝ ըստ բաշխման ցուցակի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Лусапсак Редакция ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/45 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | товарный знак | технические характеристики |
| 1 | | |